

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ՀՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՆ ԱՌԱՋԱՆ  
№ 12 ՔԱՂԴՓՐՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ № 12

Խ. Ա. Հ. Մ.

ՅԵՎ

ԿԱՊԻՏԱՆԻ ԱՌԱՋԱՆ ՅԵՐԿԻՐԵՐԸ

Թագմ. Ե. Ճ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1927

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԻՄ ԱԽՏՎԱՐԱԳՐԱԳՐԱԿԱՆ

---

Ա. Հ. Ա. Ա.

Հ Յ Ց

ՊՈՎՈՐԱԿԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

. Ե . Արտակ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԵՐԵՆԴԱՆ - 1987

# ԼԿՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ № 12 ԳԱՂԴՊՐՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ № 12


$g(47)$   
 $\downarrow$   
 $\downarrow$  many.  
 $g(4)$

**H. U. L. U.**

ՅԵԿ

# ԿԱՊԻՏԱՆԻՈՒՑԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԸ

$$\begin{array}{r} \cancel{17644} \\ - \cancel{1} \\ \hline A \end{array}$$



## ՄԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

8698446-1927

Գրառեալիվար № 52բ. հ. 501 Տիրաժ 4000.

Պետհրատի յերկըռորդ տպարան Յերևանում.—179

# ԽՄՅՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԸ

## I. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Կապիտալիզմի մաս-  
նակի կայունացումը մենք հաճախ լսում և կար-  
գում ենք կապիտալիզմի մասնակի ամրացման,  
կամ, այլ կերպ ասած, կապիտալիզմի ստարիլի-  
զացիայի մասին։ Ի՞նչ է ներկայացնում իրենից  
այդ ստարիլիզացիան։ Ինչպես հասկանալ այդ—  
վորպես կապիտալիզմի գործերի, իսկական և ա-  
մուր բարելավում, կամ ընդհակառակը, վորպես  
ժամանակավոր, աննշան դադար։ Այդ հարցերին  
ել մենք կաշխատենք պատասխանել։

Հետապատերազմյան առաջին տարիների հա-  
մեմատ կապիտալիստական տնտեսության դրու-  
թյունը, անկասկած, բարելավվել եւ։ Այդ մասին  
մեզ ասում եւ խոշորագույն կապիտալիստական  
յերկիրների արտադրության խոշորագույն ճյուղե-  
րի դիագրամմը։ Համեմատության համար վերց-  
վում եւ 1913 թիվը—նախապատերազմյան, 1921 թ.  
պատերազմից հետո կապիտալիստական տնտե-  
սության անկման ամենաբարձ տարին, և 1925 թ.։

**ԱՇԽԻ, ՀՈՒԳՈՒՆԻ, ՊՈՂՊԱՏԻ ՅԵՎ ԲԱՄԲԱԿԻ  
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ,  
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ, ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՄԻԱ-  
ՅՅԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ**

1913 թ.	Աճուին	Չուզուն	Պող- պատ	Բամբակ
	100	100	100	100
1921 թ. . .	57	25,5	48	47
Անգլիա . . .				
1925 թ. . .	84	61	96,5	76
1921 թ. . .	81	68	78	59
Գերմանիա . . .				
1925 թ. . .	94	93	103,5	69
1921 թ. . .	66	41	44,4	72
Ֆրանսիա . . .				
1925 թ. . .	108	95	100	111
1921 թ. . .	89	54	63	86
Միաց. Նահան.				
1925 թ. . .	102,5	119	141	109

Բայց կապիտալիստական տնտեսության վերջին տարիների վորոշ հաջողություններն ամենին կայուն չեն:

Ամենից առաջ բարելավումը միատեսակ չէ առանձին կապիտալիստական յերկիրներում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում արդյունաբերությունն անցել է նախապատերազմիան մակարդակից:

Ամերիկան պատերազմին մասնակցել է միայն 1917 թվին, պատերազմի առաջին տարիներում նա հսկայական կարողություն է դիզել պատերազմող յերկիրներին ապրանք հայթալթելուց: 1925 թվին Ամերիկան արտադրել է նավթի համաշրջանային արտադրանքի 71 տոկոսը (մոտ յերեք քառորդը), չուզունի և պողպատի 60 տոկոսը (յերեք հինգերորդականը) և ածխի համաշխարհային արտադրության 40 տոկոսից ավելին (յերկու հինգերորդականից ավելին):

Այլ կացության մեջ է գտնվում կապիտալիզմն Անգլիայում—Ամերիկայի Միացյալ Նահանգներից հետո, յերկրորդ յերկիրն իր հզորությամբ: Մեր բերած դիագրամմի մեջ, Անգլիան արտադրության բոլոր չորս ճյուղերում ցույց է տալիս ամենացածր տոկոսը: Անգլիայի անտեսական անկումն ավելի ակնհայտ կը դառնա, յեթե դիտենք 1924—25 թվին նրա արտադրության կացությանը վերաբերող թվերը:

## 1913 ԹՎԻ ՀՅՄԵՄՑՑ

### Սաացվել ե բարածուի

<i>1923 թ.</i>	<i>1924 թ.</i>	<i>1925 թ.</i>
<i>96 ⁰/₀</i>	<i>93 ⁰/₀</i>	<i>84 ⁰/₀</i>

### Զուլվել ե չուզուն

<i>72,5 ⁰/₀</i>	<i>71 ⁰/₀</i>	<i>61 ⁰/₀</i>

### Առտագրվել ե պողպահ

<i>111 ⁰/₀</i>	<i>107 ⁰/₀</i>	<i>96,5 ⁰/₀</i>

Նշանակում ե 1924—25 թ. ընթացքում Անգլիայի կապիտալիստական տնտեսությունը վորոշակի կերպով վատթարանում է։ 1926 թվի առաջին կիսամյակի արդյունքները ցուցադրում են հետագա անկումը։ Որինակ, 1926 թվի առաջին կիսամյակում պողպատի և չուզունի արտադրությը, 1925 թվի առաջին կիսամյակի համեմատ՝ կրճատվել է ավելի քան մեկ հինգերորդականով։ Մենք արդեն չենք խոսում ածխի հանութի (ձօբաւա) մասին, վորը սաստիկ կրճատվել է հանքագործների յերկարաց գործադրությունով։

Թե վորքան խորն են անգլիական կապիտալիզմի ապրող ծանր գժվարությունները, ցույց է տալիս չմեղմացող հոկայտեան գործադրկությունը։ 1926 թվի հուլիսին նու հոսել է մեկ միլիոն

700 հազարի, չհաշված գործադուլավոր հանքագործներին:

Բայց մնացած յերկիրների կտողիտալիստական անտեսություններն են առըստ են լուրջ դժվարություններ։ Գերմանիայում, 1925—26 թ. նկատվում է ուժեղ արդյունաբերական ճգնաժամ, ապրանքների սպառման շուկաների բացակայության պատճառով։ 1926 թվի հուլիսին յուրաքանչյուր 100 բանվորից—18-ը յեղել է գործազուրկ, իսկ 18-ը ամբողջ շաբաթը լրիվ չի տշխառել։

Ֆրանսիայում յերկար ժամանակ տևում է ֆինանսական ճգնաժամ։ Ֆրանկը (ֆրանսիական դրամանիշ) քանի գնում կորցնում է իր արժեքը և 1926 թվի սեպտեմբերին նա արժեքը նախապատերազմյանի մեկ վեցերորդ մասից պակաս։ Այդ յերկութիւն անխռուսափելիորեն կը հանգի արդյունաբերական ճգնաժամի։

Այդպիսով, կտողիտալիտական անտեսության մեջ նկատվող բարեւտվումը հանգիստանում է անկախուն։

Այդ բանում մենք դեռ ավելի կը համոզվենք, յերբ կը վերլուծենք, թե ինչ միջոցներով կտողիտալիզմը հասել է իր վորոշ ամրացման։

**Մասնակի ուսարիլի-  
գացիան առում ե  
բանվոր դասակարգի  
յեզ բութուագիայի  
միջեզ գոյություն  
ունեցող հակասու-  
թյունները**

**Բոլոր կապիտալիստա-  
կան լերկիրներում, առանց  
բացառության, ստարիլիզա-  
ցիան կիրառվում ե աշխա-  
տավոր մասսաների՝ և առա-  
ջին հերթին բանվոր դասա-**

**կարգի հաշվին։ Շուկաներում ավելի հաջողու-  
թյամբ մրցակցելու համար կապիտալիստները  
ձգտում են եժանացնել ապրանքը. այդ եժանա-  
ցումը տեղի լի ունենում բանվորական մասսա-  
ների հաշվին։ Տեղի լի ունենում կապիտալիստ-  
ների հարձակում բանվորների աշխատավարձի և  
բանվորական որվա վրա։**

**Բավական ե բերել մի քանի տվյալներ. —**

<b>Ետակայում</b>	<b>Ինը ժամյա բանվորա- կան որ ե մտցված։ Մենք</b>
<b>Անգլիայում</b>	<b>ականատես ենք հանքափորների հերոսական պայ- քարին՝ ուղղված կառավարության և հանքատե- րերի դեմ, վորոնք փորձում են իջեցնել աշխա- տավարձը և մտցրել 8 ժամյա բանվորական որ՝ 7 ժամյա բանվորական որվա փոխարեն։</b>

<b>Կեհաստանում</b>	<b>Աշխատավարձը կանգնած ե աղքատության մակարդակին։ Որինակ, մանա- ծալին շըջաններից մեկում, 1926 թվի հունիսի 1-ին, վորակալ բանվորի աշխատավարձը միջին</b>
--------------------	--

հաշվով հավասարվում է 27 կոպեկի, իսկ վորակ չունեցող բանվորինը՝ 10 կոպ. որական։

Առաջ մենք ասացինք, թե վորքան ուժեղ է գործազրկությունն Անգլիայում, Գերմանիայում։

Աշխատավորության կյանքի պայմանների վատթարացմանն է տանում նույնպես և այն «ոգնությունը», վորը ցույց է տալիս Ամերիկան Յեվրոպային՝ դրամական փոխառության ձևով, հենց այն «ոգնությունը», վոր հանդիսանում է կապիտալիզմի մասնակի ստաբիլիզացիայի պատճառներից մեկը Յեվրոպայում։

Մենք վերենում կարդացինք, թե պատերազմի ընթացքում ինչպես ուժեղացել է ամերիկյան կապիտալիզմը։ Մինչև պատերազմը Ամերիկան յեղել է Յեվրոպայի պարտատերը, այժմ—ընդհակառակը, Յեվրոպան հսկայական պարտքեր ունի Ամերիկային։ Ամերիկան շարունակում է հսկայական կապիտալներ մուծել ուրիշ յերկիրները և մասնավորապես՝ Յեվրոպայի յերկիրները։ Միայն 1925 թվին Ամերիկան Յեվրոպա յէ մուծել 6 միլիարդ ռուբլի։ 1925 թվի սկզբին ոտարերկրյա պետությունները պարտք են յեղել Միացյալ Նահանգներին 12 միլիարդ դոլար։

Ամերիկան Յեվրոպային ցույց տված «դրամական ոգնության» մեջ ինարկե, լավ շահում է։

Միայն Անգլիան տարեկան տալիս է Ամերիկային 300 միլիոն ռուբլի, վորպես փոխառության տոկոսներ։ Ամերիկան դարձել է ՅԵՎՐՈՊԱՅԻ վաշխառուն։

Ամերիկային տրվելիք վաշխառուական տոկոսների վճարման ծանրությունը յեվրոպական բուժուազիան զցում է աշխատավորական մասսաների և առաջին հերթին՝ բանվորների ուսերին։ Ինչպես մատնանշում է Կոմինտերնի գործկոմի բանաձեռ, «ամերիկյան փոխառություններն ըստըրկացնում են ՅԵՎՐՈՊԱՅԻՆ, այսինքն, վերջին հաշվով ստիպում են յեվրոպական բանվորներին աշխատել ամերիկյան կապիտալիստների համար»։

Մեծանում են հարկային ծանրությունները։ Իրենց ամբողջ ծանրությամբ հարկերն ընկնում են աշխատավորական մասսաների ուսերին։ Ահա, որինակ, թվերը.—

**Բնակչությունը վորքան և հարկ վճարել**

Մինչև պատեհ 1925 թ.

բաղմը

Անգլիան . . . . .	$100^0/_0$	$258^0/_0$
Ֆրանսիան . . . . .	$100^0/_0$	$293^0/_0$

Նշանակում է, պատերազմից առաջ տրվող յուրաքանչյուր ռուբլու փոխարեն, Անգլիայի բնակչությունը վճարում է 2 ռուբլի 58 կոպեկ, Ֆրանսիայում—2 ռուբ. 93 կոպ.։

Նույնը մենք նկատում ենք Գերմանիայում, Իտալիայում, Յապոնիայում և այլն։ Հարկերի գլխավոր ծանրությունը կրում են աշխատավոր մասսաները։ Նախապատերազմյան ժամանակի համեմատ բավական մեծացել են աշխատավարձից ստացվող հարկերը։ Որինակ, Գերմանիայում նախատերազմյան շրջանում, մինչև 450 ռուբլու (900 մարկ) համար յեկամուտը ազատվում էր հարկից։ 1924 թվի որենքներով արդեն հարկադրվում ե նախապատերազմյան 400 մարկ յեկամուտը։ Դրա հետ միաժամանակ հարկային դրույքների չափերը՝ նախապատերազմյան ժամանակների համեմատ, մեծացել են 10 անգամ։ Դիտենք հետևյալ թվերը։—

**ԻԵՖՈՑ ԻՐԵԿ Ե ՎԵՐԵԼ ՀԱՄԲՈՒՐԳԻ ԲԱՆՎՈՐԸ**  
1913 թ. . 1500 մարկ (750 ռ.) յեկմու. տար. 15 մ.  
1924 թ. . » » » » » 150 մ.

Ստաբիլիզացիան բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորական մասսայի հաշվին կիրառելը տանում է դեպի բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև գոյություն ունեցող հակասությունների ել ավելի սրումը։ Կապիտալի հարձակումն ունենում է այն հետևանքը, վորաստիճանաբար հեղափոխականացնում է բանվորներին, ուժեղացնում է նրանց դիմադրությունը՝ հանդեպ կապիտալի։ Դրա ամենացայ-

տուն ապացուցը կարող ե հանդիսանալ Անգլիացի ընդհանուր և ապա հանքափորների գործադուլը:

1926 թվի մայիսի մեկին մեկ միլիոն 200 հազար անգլիական հանքափորները պայքարի յեն բռնվում հանքատերերի հետ։ Հանքատերերը ձըգտում ենին իջեցնել աշխատավարձը և յերկարացնել բանվորական որը։ Բանվորների հաշվին, անգլիական հանքատերերը փորձում ենին եժանացնել անգլիական ածուխը, ուժեղացնել նրա սպառումը և մեծացնել իրենց շահուցիթը։ Հինգ միլիոն բանվորներ գործադուլ արին ի նշան հանքափորերի համերաշխության։ Ամբողջ յերկրում կանգ առավ յերկաթուղարին շարժումը, կանգ առավ արդյունաբերությունը։ Բանվոր դասակարգը դեմ առ դեմ կանգնեց հանդեպ բուրժուազիայի։ Բանվորների դեմ հանեցին զորքերն ու նավատորմը։ Իսկ բանվորական մասսաները դրան պատասխանեցին հսկայական վոգենությամբ և չտեսնված կայունությամբ։

Ընդհանուր գործադուլը մատնվել և վիժվել է անգլիական արհմիությունների Գլխավոր Խորհրդի ղեկավարների կողմից։ Այդ առաջնորդները ընդհանուր գործադուլ չենին ուղում։ Նրանք հայտարարեցին այն, յենթարկվելով բանվորա-

կան մասսաների ճնշման և վախկոտությամբ դադարեցրին գործադուլը, թեպետ բանվորական մասսաների կայունությունը խոստանում եր լիակատար հաղթանակ։ Շնորհիվ Գլխավոր Խորհրդի խայտառակ դավաճանության, Անգլիայի բանվոր դասակարգը պարտություն կրեց (թեպետ հանքագործները դեռ շարունակում են պայքարը չը տեսնված ծանր պայմաններում)։ Բայց ընդհանուր գործադուլը մնում է վորպես կապիտալիստական հասարակարգի ահարկու նախազգուշացում։ Նա ցուց տվեց, թե վորքան սուր են հակասությունները բանվոր դասակարգի և բուժուազիայի միջև, թե ինչպես այդ հակասությունները փորում են կապիտալիզմի հիմքը։

Այսպիսի դեպքերը, ինչպիսին ընդհանուր գործադուն ե, հսկայական նշանակություն ունեն բանվորների հեղափոխական դաստիարակության համար։ Բանվորը համոզվում է, վոր իր ներկայիս առաջնորդներն անընդունակ են կապիտալի դեմ պայքար մղելու։ Այդպիսի դեպքերում բանվորը սովորում է հասկանալ, թե բուժուազիան պետությունը բանվոր դասակարգին հալածելու զենք է, իր սեփական փորձի հիման վրա բանվորն այն յեզրակացության ե դալիս, վոր անհրաժեշտ է տապալել բուժուազիային։

Գաղութների ննօված Մենք քննեցինք, թե  
ժողովուրդների պայ-ինչպես կապիտալիզմն իր  
քարի ուժեղացումը մասնակի կայունացման ե  
նասնում աշխատավորական մասսաների և առա-  
ջին հերթին—բանվոր դասակարգի հաշվին։ Սու-  
բեկիզացիայի մյուս ճանապարհը—դա գաղութների  
հալածված ազգությունների վրա գործ դրած  
ճնշումն է, այնտեղից հսկայական շահութ դուրս  
կորզելը։ Վորպեսզի մեզ համար պարզ լինի, թե  
ինչ չափեր են ընդունում գաղութների շահա-  
գործումը, սեջ բերենք ժամանակակից աշխա-  
տանքի պայմանների նկարագրությունը Հնդկաս-  
տանում։

Աշխատավարձը, հնդկական արդյունաբե-  
րության զանազան կենտրոններում, տրվում է  
վոչ համաչափ։ Վիճակագրության կառավարա-  
կան բյուրոն միջին աշխատավարձը սահմանում  
16-ից մինչև 28 կոպեկ որական։ Պողպատի ար-  
դյունաբերության բանվորն որական միջին թւ-  
վով դատում է 30 կոպեկից մինչև մեկ ռուբլի,  
մանածային բանվորները—16 կոպ. մինչև մեկ  
ռուբլի, գյուղական բանվորները—8-ից մինչև  
40 կոպեկ։ Կենտրոնական և հարավային Հնդկաս-  
տանում հեղինակը պատահել է վորակյալ բան-  
վորների—մանածագործների, մեքենավարների,

ատաղձագործների, քարտաշների, վորոնք ամսական դատում ելին 16-ից մինչև 24 ռուբլի։ Բենգալիայում, հանքափորները դատում են որական 24 կոպ., իսկ կանաք—20 կոպ.։

Յերեխայի աշխատանքը մեծ գործադրություն ե գտնում Հնդկաստանում։ Կոմպոր քաղաքում բանվորների յերեխաների 75 տոկ. մահանում ե կյանքի առաջին իսկ տարում, շնորհիվ այս սարսափելի պայմանների, վորոնց մեջ ստիպված են ապրել ու աշխատել նրանց ծնողները—հնդկական պրոլետարները։

Իմպերիալիստական հալածանքն առաջ ե բերում գաղութային ժողովուրդների ավելի ուժեղ ընդիմադրություն։ Աճող ժողովրդական հեղափոխական շարժումը սպառնում է կապիտալիստական յերկիրների գաղութային տիրապետության։ Ժողովրդական-հեղափոխական շարժման հսկայական աճումը Զինաստանում, վորկենտրոնն ունի կանոնը, ապստամբությունը Մարոկկոյում և Սիրիայում,—այս բոլոր անցքերը ցույց են տալիս իմպերիալիստների աճող անկայուն վիճակը գաղութներում։

**Կապիտալիզմը մաս-**  
**վում ե իր հակասու-**  
**թյուններից**

Մենք պարզեցինք, թե ինչպես աճում են հակառակություններն իմպերիալիզ-

մի և գաղութների ճնշված ժողովուրդների միջև, բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև։ Միայն այդ հակասությունները դարձնում են կապիտալիզմի ներկայիս ստարիլիզացիան անկայուն։ Բայց կան դեռ մի ամբողջ շարք այլ խորը հակասություններ՝ իրենց կապիտալիստական լեռկիրների միջև։

Շատ սուր են հակասություններն Անգլիայի ու Ամերիկայի միջև։ Խիստ ամրապնդված ամերիկյան կապիտալիզմը ձգտում է դուրս մղել Անգլիային նրա սպառման շուկաներից, նրա գաղութներից։ Անգլիան, վոր մինչեւ պատերազմը յեղել ե աշխարհի ամենախոշոր կապիտալիստական պետությունը, չի ուզում յերկրորդական պետության դրության մեջ ընկնել։ Անգլիայի ու Ամերիկայի միջև տարվում ե կատաղի պայքար նավթի համար։ Նավթն ահագին նշանակություն ունի ժողովրդական տնտեսության մեջ այս կամ այն լեռկրի և ռազմական ուժի համար։ Ահա ինչու իմպերիալիստներն իրենց միջև պայքարում են նավթային հողերի առթիվ։

Իմպերիալիստական պատերազմում պարտված Գերմանիային, հաղթանակած լեռկիրները ստիպում են տարեկան իրեն ահագին դրամ վր-

ճարել. Ընդամենը Գերմանիան պետք է վճարի  
65 միլիարդ ռուբլի:

**Գոյություն ունի սուր հակասություն ամե-**  
**րիկյան և յերոպական կապիտալիզմի միջև՝ արն-**  
**տեսական մրցակցության հողի վրա։ Ամերիկա-**  
**ին ձեռնուու յե, վորպեսզի իր յերոպական պար-**  
**տատերերը վորոշափով ամրանան և ի վիճակի**  
**լինեն վճարելու իր պարտքի տոկոսները։ Բայց**  
**միևնույն ժամանակ Ամերիկան վախենում է**  
**յերոպական պետությունների շատ ուժեղաց-**  
**մամբ, վորովիետե այդ կսպառնար միջազգային**  
**տնտեսության մեջ նրա ունեցած հեղեղոնիա-**  
**լին (գերիշող գերին)։**

**Անգլիան մրցակցում է Ֆրանսիայի հետ**  
**Յերոպայում ազգեցություն ունենալու համար։**  
**Անգլիան աջակցում է Գերմանիային ընդդեմ**  
**Ֆրանսիայի և միևնույն ժամանակ չափազանց**  
**վախենում է տնտեսապես ուժեղացած Գերմա-նիայի մրցակցությունից։**

**Կապիտալիզմի կայունացման խո-**  
**չընդուռ է հանդիսանում նույնպես**  
**ԽՍՀՄ գոյությունը։ Ավելի ու ավելի ուժեղացող**  
**սլրությունարական պետության գոյությունը տա-**  
**տանում է կապիտալիզմի ուժն ու նրա կայու-նությունը։**

«Կորցնել աշխարհի մեկ վեցերորդ մասը,  
կորցնել շուկաները, մեր յերկրի հում նյութերի  
աղբյուրները, դա կապիտալիստական Յերոպայի  
համար նշանակում է կրծատել իր արդյունաբե-  
րությունը, խախտել այն հիմնական կերպով»:  
(14-րդ կուսհամագումարին տված ընկ. Ստա-  
լինի զեկուցումից):

**Նոր պատերազմների  
վտանգը**

Կապիտալիզմի հակա-  
սությունները ստեղծում են  
իմպերիալիստական պատերազմների վտանգը:  
Այդ մասին պերճախոս կերպով ասում են մեջ  
բերվող դիագրամմում ցույց տված կապիտալիզմի  
կարևորագույն յերկիրների սպառազինման աճու-  
մը, մի աճում, վոր արդեն անցել է նախապա-  
տերազմյան մակարդակից:

**Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի յեվ Միացյալ Նա-  
հանգների ռազմական բյուջեն միատեղ վերցրած  
կազմել են**

**1913 թվին**

1,080,000,000 դոլ.  
մեկ միլիարդ ութսուն  
միլիոն նախապատե-  
րազմյան դոլար

**1925 թվին**

1,585,000,000 դոլ.  
մեկ միլիարդ հինգ  
հարյուր ութսուն և  
հինգ միլիոն նախա-  
պատերազմյան դոլ.

**Նույն այդ յերկիրներում գեների տակ յեղել են**

**1913-14 թ. թ.**

1,613,000 մարդ

**1925 թվին**

1,774,000 մարդ

Վրա հասնող նոր պատերազմների վտանգը բանվորական մասսաներին տանում է դեպի հեղափոխության ճանապարհը, բանվորը համոզվում է, վոր կապիտալիզմի հետագա գոյությունը կապված է աշխատավորական մասսաների մեծագույն տանջանքների հետ, վոր միայն բուժուազիայի տապալման հետևանքով կարելի կը լինի հեռացնել նոր արյունալից պատերազմների վտանգը:

**Կապիտալիզմի կայունացումը — Ժամանակավոր ե. անկայութեա**

ցության պետք է մենք հանգենք:

**Այժմ ամփոփենք կապիտալիզմի դրության մասին մեր ամբողջ ասածները:** Ի՞նչ գլխավոր յեզրակացության պետք է մենք հանգենք:

Կապիտալիզմի դրության բարելավում, համեմատած հետպատերազմյան առաջին տարիների հետ — անկասկած կա: Չտեսնել այդ նշանակում է մոռանալ կենինի պատգամները բայց կեկների կողմից իսկական կացության գգասատ հաշվառման անհրաժեշտության մասին: Սակայն պետք է նկատի առնել, վոր այդ բարելավումը հավերժական չէ: Կապիտալիզմը մաշվում իր հակասությունների հսկայական քանակով: Միշտ ավելի սրվում են հակասությունները բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև,

իմպերիալիզմի և դաղութների ձնշված ժողովուրդների միջև, տարբեր կապիտալիստական պետությունների միջև, կապիտալիզմի ամրացման արգելք և հանդիսանում իսչ Միությունը:

Այդ հակասությունները դարձնում են գոյություն ունեցող կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիան ժամանակավոր և վոչ կայուն:

**Պրոլետարական հեղափոխությունների անկանությունը խուսափելի յէ**

«Կապիտալիզմի անկանությունը անհաջարավոր է, — ասվում է կոմինտերնի Գործկոմի 6-րդ պլենումի բանաձեռում, — բայց այդ շրջանի ներսում հնարավոր են ժամանակավոր, մասնակի բարելավումներ»։ Յեվ այդպիսի ժամանակավոր բարելավում—մասնակի ստարիլիզացիա նկատում ենք մենք այժմ։

Բուրժուազիայի սպասավոր մենշևիկներն ամեն քայլափոխին ասում են, — կապիտալիզմը վերջնականապես վոաքի յէ կանգնել, նրան սպասում ե դեռ բարեկեցության ու ծաղկման մի շրջան։ Բայց բավական ե դիտել կապիտալիզմի իսկական դրությունը, դալու համար այն յեղբակացության, վոր կապիտալիզմի ստարիլիզացիան մասնակի յէ, նեխած ե։

Զնայած ժամանակավոր բարելավման, կապիտալիզմը գնում ե դեպի անկում։ Վաղ թե

ևւշ կը հաղթանակի պրոլետարական հեղափոխությունը։ Նրա ուժերը, թեպետ և դանդաղ, բայց որեցոր ամրանում են։ Կապիտալի հարձակումը բանվորներին տանում եւ դեպի պայքարի հեղափոխական ճանապարհը, ինչպես այդ ցուց տվեց ընդհանուր գործադուլի որինակն Անգլիայում։ Աճում են կոմմունիստական կուսակցությունների ուժերը, վորոնք նախապատրաստում են բանվոր դասակարգին վճռական մարտի համար՝ ընդդեմ կապիտալիզմի։

Միջազգային կոմմունիստական հեղափոխությունն անխռուսափելի յէ. միայն իշխանության զլուխ կանգնած պրոլետարիատը կարող կը լինի լուծելու այն հակասությունները, վորից յելք չի կարողանում գտնել կապիտալիստական հասրակությունը։

Այն մասին, թե մեր յեղբայրական կոմմունիստական կուսակցություններն Արևմուտքում ինչպես պետք եւ վարեն իրենց հետագա պայքարը կապիտալիզմի մասնակի ստաբիլիզացիայի պայմաններում,—մենք կասենք հետեւալ (տասյերեքերորդ) զրուցում։ Իսկ այժմ ավելի մանցերեքերորդ) զրուցում։ Իսկ այժմ ավելի մանցամասն խոսենք այն դերի մասին, վոր ժամանակակից պայմաններում մեր Խորհրդային Միակակից պայմաններում մեր Խորհրդային Միության բաժին եւ ընկնում, այն մասին, թե մենք

բոլորս պետք է սոցիալիզմ կառուցենք կապիտալիստական պետությունների շրջապատում, այն նշանակության մասին, վոր ունի մեր սոցիալիստական շինարարությունը միջազգային պրոլետարական հեղափոխության համար:

## 2. ԽՍՀՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

«Դադարի» օրջանք Մեր յերկրում բանվոր պետք է ոգտագործել դասակարգի կողմից իշխանությունը գրավելուն միջնարերության համար առաջախանական կառավագանության համար:

Մեր յերկրում բանվոր դասակարգի կողմից իշխանությունը գրավելուն միջնարերության համար առաջախանական կառավագանության համար:

Եմպերիալիզմը պատասխանեց ինտերվենցիալով (զինված միջամբությամբ): Ոտարերկրյա կապիտալիստների աշակերթյան շնորհիվ միայն ոռոսական հականեղափոխությունը յերեք տարի կարողացավ պարբեր պրոլետարիատի դիկտատուրայի դեմ: Իմպերիալիզմի այդ հարձակումը յետ մղվեց Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների միացյալ ուժերով:

Իմպերիալիստները հարկադրված յեղան հրաժարվելու մեր դեմ ուղղմական պայքար մղելուց: ԽՍՀՄ աճեց և ամրացավ, իրենք կապիտալիստական յերկիրները ջլառվում են փոխադարձ հակասություններով և միջազգային իմպերիալիզմն առաջմ չի հանդգնում մեր դեմ դուրս գալ նոր ինտերվենցիալով:

«Միջազգային հարաբերությունների բնագավառում,—ասված է կուսակցության 14-րդ համագումարի բանաձևում,—ամրացել ու ընդլայնվել է «դադարի շրջանը»:

Այդ «դադարի» շրջանը մենք պետք է ոգտագործենք մեր յերկրում սոցիալիստական շինարարությունն ուժեղացնելու համար։ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելով, մենք դրանով իսկ ամրացնում ենք պրոլետարական հեղափոխության ուժերը։ Նախորդ մի քանի զբույցներում մենք ծանոթացանք, թե ինչ ուղիներով ե ընթանում սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում։

Արաւահմանի հետ ունեցած մեր տնտեսական կապերը մենք ոգտագործում ենք սոցիալիստական շինարարության շահերի համար։ Խորհրդային իշխանությունը ձգտում է ամեն կերպ զարգացնելու իր տնտեսական կապերը միջազգային տնտեսության հետ։ Այդ ստիպողապես պահանջում են մեր տնտեսական զարգացման շահերը, սոցիալիզմի շինարարության շահերը։

Մենք ներմուծում ենք մեքենաներ՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության համար և հում նյութ՝ մանածագործական, կաշվի՝

ու մետաքսի արդյունաբերության համար։ Արտածում ենք հաց, լուղ, բուրդ, կտավիատ, փետրարմատ (պենյա), մուշտակեղեն և գյուղատընտեսական այլ մթերքներ։ Արտածում ենք նաև նավթ, մարդանեց և արդյունաբերության միքանի այլ մթերքներ։

Վորքան լայն ե արտաքին առևտուի շրջանառությունը, այնքան կարելի յէ ավելի արագ առաջ տանել տնտեսության զարգացումը։ Մենք ձգտում ենք ունենալ «ակտիվ բալանս», այսինքն՝ վորպեսզի արտածումը (Եքսպորտ) բարձր լինի ներածումից (իմպորտ)։ Այն շահույթը, վոր մենք ստանում ենք արտաքին առևտուից, մեր յերկրի ինդուստրացման գործի համար կուտակման մի աղբյուր ե հանդիսանում։ Մեր կապը միջազգային տնտեսության հետ իրականացվում ե և կոնցեսսիաների միջոցով։ Մենք ձգտում ենք, վորպեսզի արդյունաբերական շինարարությանը մասնակից անենք ոտարերկրյա կապիտալին։ Մեր տնտեսության զարգացման համար ձեռնտուպայմաններով մենք ոտարերկրյա կապիտալին ենք հանձնում մշակելու համար բնական այն հարստությունները, վոր մենք դեռ ինքներս ի վաճակի չենք մշակելու։

Ուժեղացնելով տնտեսական կապերը կապիտալիստական յերկիրների հետ, կուսակցությունը խնդիր է դնում ապահովելու ԽՍՀՄ տնտեսական անկախությունը։ Դրան հասնում ենք ԽՍՀՄ ինդուստրիացման միջոցով, (այդ մասին մենք կարդացել ենք յերրորդ զրուցում)։ Մենք ձըդտում ենք, վորպեսզի ԽՍՀՄ «իրենից ներկայացնի ինքնուրույն տնտեսական մի միավոր, վորը կառուցվում է սոցիալիստորեն և շնորհիվ իր տնտեսական աճման, բոլոր յերկիրների բանվորներին և գաղութային ու կիսագաղութային յերկիրների ճնշված ժողովուրդներին հեղափոխականացնելու մի հզոր միջոց է հանդիսանում (Համ. Կ. (բ.) Կ. 14-րդ համագումարի բանաձեից)։

ԽՍՀՄ խաղաղու-  
թյուն եռւգում, բայց  
պեսք ե պատրաս լի-  
ճի պատերազմի

**ԽՍՀՄ Խաղաղու-  
թյուն եռւգում, բայց  
պեսք ե պատրաստ լի-  
նի պատերազմի**

**Հաջող սոցիալիստական  
շինարարության պայմանը  
հանդիսանում է խաղաղու-  
թյունը։ Ահա ինչու ինչ  
ձգտում է ամրացնել խաղաղասիրական հարա-  
բերությունները մեր ըրջապատում գտնվող կա-  
պիտալիստական պետությունների հետ։ Կապի-  
տալիզմի աճող հակասությունները դրդում են  
նրան նոր պատերազմների։ Վերևում մենք կար-  
դացինք, թէ ինչպես ե մեծանում կապիտալիս-**

տական յերկիրների սպառազինումը։ Մեր յերկիրը—միակն է, վորն իրապես կիրառում է խաղաղության քաղաքականությունը։ Այդ հաստատվում է, մասնավորապես, հետեւյալ յերկու դիագրամների՝ տվյալներով։

**Բանակի ծախուերը բնակչության մի հոգու վրա \***

ԽՍՀՄ	.	.	.	4 ուր.	—
Ֆինլանդիա	.	.	.	8 ու.	—
Եստոնիա	.	.	.	8 ու.	60 կ.
Միաց. Նահանգներ	.	.	.	9 ու.	10 կ.
Լատվիա	.	.	.	9 ու.	60 կ.
Լեհաստան	.	.	.	11 ու.	10 կ.
Ֆրանսիա	.	.	.	17 ու.	20 կ.
Անգլիա	.	.	.	22 ու.	30 կ.

**ՀԱՄԵՄԱՏՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԿԱՊԻՏԱՆՈՒԹՅ-**

**ԱՅՆ ՑԵՐԿԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԽՍՀՄ ԶԻՆԴԱՌ**

**ՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Զինվորերի բանակը 100 բառակուսի  
կիլոմետրի վրա**

Ֆրանսիա	Լեհաստան	Ռումինիա	Լատվիա
1243	806	536	324

Եստոնիա	Ֆինլանդիա	ԽՍՀՄ
318	85	27

\* ) ԾԱՆՈԹ. — Հաշվվում է մի տարվա ծախուերը։

Կուսակցական 14-րդ համագումարի բանաձեռնում ասված է, վոր անհրաժեշտ է «վարել խաղաղության քաղաքականություն, վորը պետք է կառավարության վողջ արտաքին քաղաքականության մեջ կենտրոնական տեղ գրավի և վորոշի նրա բոլոր հիմնական յելութները»:

Բայց դրա հետ միասին միշտ պետք է հիշել, վոր մենք շրջապատված ենք թշնամիների սերտ ողակով։ Միջազգային իմպերիալիզմը չի կարող հաշտվել աշխարհիս յերեսին միակ բանվորական պետության գոյության հետ։ ԽՍՀՄ վորպես կատաղի թշնամի հանդես յե գալիս հատկապես անգլիական իմպերիալիզմը։ Քաղաքացիական պատերազմի տարիներում միջազգային իմպերիալիզմը փորձում եր մեղ ընկճել զինված պայքարով։ Ներկայումս, կապիտալիստները փորձում են մեղ վրա գործադրել պայքարի այլ՝ գերազանցապես անտեսական բնույթ կրող միջոցներ։ Բայց կապիտալիստները դեռ տակավին չեն հրաժարվել մեր դեմ զինված պայքար մղելու մտքից։

Ահա թե ինչու ընկ. Լենինը խորհուրդների 9-րդ համագումարում՝ վերջին համագումարին, վորտեղ նա ներկա յե յեղել, — ասել է.

«Մենք անում ենք մեղ. — դիմելով մեր խա-

ղաղ շինարարության, մենք կը գործադրենք բոլոր ուժերը, վորպեսզի անընդհատ շարունակենք այն։ Միևնույն ժամանակ, ընկերներ, զգաստ յեղեք, խնամեք, վորպես աչքի լույս, մեր յերկրի և մեր կարմիր բանակի պաշտպանունակությունը։

Այդ պատճառով եւ, 14-րդ կուսակցական համագումարը վորոշել է «Ճեղք առնել բոլոր միջոցները յերկրի պաշտպանունակությունն ամրապնդելու, կարմիր բանակը և ծովալին ու ողալին կարմիր տորմիղն ուժեղացնելու համար»։

Յերկրի պաշտպանունակությունն ամրապնդելու այդ աշխատանքի մի մասն ընկնում է կոմիերիտմիության վրա։ Կարմիր բանակում այժմ հաշվում են 100 հազարից ավելի կոմիերիտականներ։ Նրանք պետք են մարտական կայունության և կարգապահության որինակ ծառայեն։ Միությունը պետք են հասնի նրան, վորպեսզի բանակ ուղարկվող կոմիերիտականը խոր ըմբռնի իր վրա ընկնող մեծ պարտականությունները, վորպեսզի նա իմանա, թե ինչպես են կառուցված կարմիր բանակը և ինչ են պահանջվում որինակելի մարտիկից։ Կոմիերիտմիությունը պետք են ամեն կերպ ոգնի ուղղմական մարմիններին՝ նախակոչչան սլատրաստության և կարմիր բանակի յերկրացին շինարարության ամրապնդման դոր-

**ՃՈՒՄ:** Յուրաքանչյուր կոմիերիտական պետք է զիտենա ռազմական գործը, վորպեսզի միշտ պատրաստ լինի սպասվող մարտերին, պաշտպանելու մեր սոցիալիստական շինարարությունը միջազգային իմպերիալիզմի հարձակումներից:

**ՄԻՌԱՅԻՆ** կանոնադրությունն ասում է.— «Կոմիերիտականը հիշում է, վոր նա պետք է կարողանա զենքը ձեռքին պաշտպանել պրոլետարական հեղափոխությունը, վոր կոմիերիտմիությունը—կարմիր բանակի և կարմիր նավատորմի հենարանն է։ Դրա համար ել, յուրաքանչյուր կոմիերիտական պետք է ուշադիր ուսումնասիրի ռազմական գործը, կարմիր բանակում և կարմիր նավատորմում լինի առաջինը ուսուցման մեջ, առաջինը կարգապահության մեջ, առաջինը մարտական գծում։

**ԽՍՀՄ—ՄԻՋՎԳԳ-  
ՅԻՑ ԻԵՂԱՓՈԽՈՒ-  
ՐՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ Ե**

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ Ուստի և ԽՍՀՄ—միջողգա-  
գային հեղափոխության գլխավոր հենարանն է։  
**ԽՍՀՄ ամեն մի հաջողություն, պրոլետա-  
րական դիկտատուրան ամրապնդող մեր ամեն  
մի նոր նվաճում, միջազգային պրոլետարական  
շարժման հաջողությունն է։ Կապիտալիստական**

**ԽՍՀՄ—առայժմ միակ  
յերկիրն է, վորտեղ ծա-  
գել է պրոլետարական**

յերկիրների բանվոր դասակարգի ավելի ու ավելի  
լայն խավերը գիտակցում են, վոր միջազգային  
բանվորական շարժման և ԽՍՀՄ շահերն ընդ-  
հանուր են։ Այդ, մասնավորապես, մատնանշում  
են Յեվրոպական տարբեր յերկիրների բազմաթիվ  
բանվորական պատգամավորությունները, վորոնք  
իրենց մեծամասնությամբ վոչ կոմմունիստներ են։  
Պատգամավորներն իրենց՝ գործարանից հեռաց-  
նելու վտանգի տակ են դնում, սոցիալ-դեմոկրա-  
տիայի առաջնորդները հաճախ պատգամավո-  
րություններին մասնակցած իրենց անդամներին  
հեռացնում են կուսակցությունից։ Բայց հսկա-  
յական ձգուումը դեպի ԽՍՀՄ հաղթահարում ե-  
րուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի հա-  
րուցած խոշոշուները։

Բանվորական պատգամավորությունները հե-  
տաքրքրության համար չեն գալիս մեզ մոտ-  
երանք գալիս են մեզ մոտ՝ տեսնելու համար,  
թե ինչողեւ ե կառուցվում սոցիալիզմ առաջմ-  
ությարհիս միակ խորհրդային յերկրում։ ԽՍՀՄ  
բանվոր դասակարգը և մեր կուսակցությունն-  
այդ պատգամավորներին սոսկ չի ցուցադրում  
մեր հաջողություններն ու պակասությունները։  
Մենք մի տեսակ հաշիվ ենք տալիս նրանց, ու-  
զում ենք լոել նրանց կարծիքը մեր շինարարու-

թեան մասին, շինարարություն, վոր հանդիսանում է պրոլետարական հեղափոխության ամրող աշխարհում տանելիք հաղթանակի գրավականը:

Բանվորների ձգտումը դեպի ԽՍՀՄ տում է «այն մասին, վոր Յեվրոպայի բանվոր գասակարգի հեղափոխական մասը, ոեր պետությունն իր զավակն է համարում, վոր յեվրոպական պրոլետարիատի հեղափոխական մասը, վորդեզրելով մեր պետությունը և այն իր զավակը համարելով, հանձն ե առնում պաշտպանելու նրան և անհրաժեշտության դեպքում կովել նրա համար»։ (Կուսակցության 14-րդ համագումարին տված ընկ. Ստալինի զեկուցումից):

Միայն Խորհրդային Միության գոյությունը, վորտեղ (Խոր. Միության մեջ) բանվորներն ու գյուղացիներն իրենց վրայից դեն են շպրտել շահագործողների լուծը, հանդիսանում է հզոր խթան բանվորների և կապիտալի կողմից բոլոր ճնշվածների հեղափոխական շարժման:

Խորհրդային յերկիրը փարոս է հանդիսանում իրենց հարստահարիչների դեմ ուղղված գութների ճնշված ժողովուրդների պայքարում։

Ահա թե ինչ է ասում ԽՍՀՄ կենտգործկոմին ուղղած՝ «չինական հեղափոխության հայր» աշազգային մեծ մարտիկ—Սուն-Յաթ-Սենի դիմումը, վոր գրված է նրա մահից առաջ։

«Թանկագին ընկերներ։ Այն ժամանակ, յերբ  
յես այստեղ պառկած եմ հիվանդ, վորի դեմ  
մարդիկ անզոր են, իմ միտքն ուղղված ե դեպի  
ձեզ և դեպի իմ յերկրի բախտը։

Դուք գլխավորում եք ազատ հանրապետու-  
թյունների Միությունը—այն զգալի ժառանգու-  
թյունը, վոր թողել ե աշխարհիս ճնշված ժողո-  
վուրդներին անմահ լենինը։ Այդ ժառանգության  
ոգնությամբ իմպերիալիզմի զոհերը կը հասնեն  
անկախության ու ազատության այն միջազգա-  
ցին հասարակարգին, վորի հիմքերը վաղուց ի  
վեր արմատավորվել են ստրկատիրության, պա-  
տերազմների և անիրավությունների մեջ...»

Հրաժեշտ տալով ձեզ, թանկագին ընկեր-  
ներ, յես ուզում եմ հույս հայտնել, վոր շուտով  
կը հասնի այն որը, յերբ ԽՍՀՄ հզոր և ազատ  
Չինաստանին կը վողջունե—վորպես ընկերոջ ու  
զինակցի և վոր աշխարհի ճնշված ժողովուրդ-  
ների ազատագրության համար մղած հսկա պայ-  
քարում յերկու զինակիցները ձեռք ձեռքի տված  
կը դիմեն հաղթանակի։

**Յեղբայրական վողջուններով**

**Սուն-Ցաք. Սեն**

**Խոր. Միուրյան մեջ  
սոցիալիզմ կառու-  
ցելուն բերահավա-  
սելը վճառում ե մի-  
ջազգային հեղափո-  
խուրյան գործին**

Մեր յերկրի տնտեսա-  
կան աճումը, սոցիալիստա-  
կան շինարարության հաջո-  
ղությունները կերտում են  
կոմմունիզմի ամբողջ աշ-  
խարհում հաղթանակելու  
պատվանդանը և հանդիսանում են լավագույն  
ազիտացիան կոմմունիզմի ոգտին, միջազգային հե-  
ղափոխության ոգտին։ Այդ այդպես ե, քանի վոր  
մեր որինակի վրա ամբողջ աշխարհի բանվորնե-  
րը համոզվում են, թե ինչպես նույնիսկ հետա-  
մնաց յերկրում հաղթանակած բանվոր դասակար-  
գը կարող ե կառուցել սոցիալիզմ։ Մենշեկ-  
ներն այդ լավ են հասկանում և նրանք ամեն  
կերպ փորձում են համոզել բանվորներին, վոր  
ԽՍՀՄ պրոլետարիատը շի կարող սոցիալիզմ կա-  
ռուցել։ Նման ազիտացիայով մենշեկները հույս  
ունեն պահպանելու իրենց ազդեցությունը բան-  
վորական մասսաների վրա, իրտնեցնելով նրան  
իշխանության համար մղվող պայքարից։

Միանգամայն ձեռնտու յէ մենշեկներին  
ոպպոզիցիայի թերահավատությունը  
դեպի մեր յերկրում սոցիալիզմ կա-  
ռուցելը, «Ահա, — ասում են մենշեկները բան-  
վորներին, — ուստի կոմմունիստների միջև գոյու-

թյուն ունեն կասկածներ դեպի սոցիալիզմ կառուցելու հնարավորությունները։ Զուր չե, վորմենք նախազգուշացնում ենք «ոռոսական որինակի» կրկնվելուց։ Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելուն թերահավատելը խախտում է միջաղղային հեղափոխության գործը։

«Սոցիալիստական շինարարության հաղթա-  
նակին չհավատալը, այդ չհավատալու քարոզը  
տանում է դեպի մեր լեռկրի՝ վորովես միջազ-  
գալին հեղափոխության բազայի, դեպի միջազգա-  
լին հեղափոխական շարժման՝ թուլացումը։ Պա-  
րունակը սոցիալ-դեմոկրատները ինչով խրանեց-  
րին մեզնից բանվորներին։ — Բարոզով, այն  
մասին, թե «ոռւսների մոտ վոչինչ չի ստաց-  
վի»։ Ներկայումս մենք ինչով ենք հարվա-  
ծում սոցիալ-դեմոկրատներին, դեպի մեզ զրավե-  
լով բանվորական պատգամավորությունների մի  
ամբողջ շարան և դրանով իսկ ամրապնդելով կոմ-  
մունիզմի դիրքերն ամբողջ աշխարհում։ — Սոցիա-  
լիստական շինարարության ասպարիզում մեր  
ձեռք բերած հաջողություններով։ Բայց միթե  
պարզ չի սրանից հետո, վոր ով քարոզում է  
թերահավատություն դեպի մեր հաջողություն-  
ները սոցիալիզմի շինարարության մեջ, նա թու-  
լացնում է հեղափոխական շարժման թափը, նա

անխռուսափելիորեն հեռանում եւ ինտերնացիոնալիզմից» (Ստալին):

Կուսակցությունը վճռապես պայքարում է դեպի սոցիալիզմի շինարարությունը հայտնաբերած ոպպոզիցիալի թերահավատության դեմ: Կուսակցությունն ու բանվոր դասակարգը համառաջատանքով հաղթահարում են շինարարության դժվարությունները և սոցիալիզմի ձանապարհով գրավում նորանոր դիրքեր: Դրանով իսկ մենք առաջ ենք մղում միջազգային հեղափոխության գործը, մոտեցնում ենք պրոլետարիատի հաղթանակի ժամը բոլոր լեռներում:

### Հ Ա Ր Ց Ա Յ Ո Ւ Ց Ա Կ

- 1) Ինչու սրվում են հակասությունները բանվոր դասակարգի և բուրժուազիալի միջև:
- 2) Ինչու սրվում են հակասություններն իմպերիալիստների և զաղութների ձնշված ժողովուրդների միջև:
- 3) Ինչու կապիտալիզմի մասնակի սոարիլիզացիան մենք անվանում ենք ժամանակավոր և վոչ կայուն:
- 4) Ինչպես ենք մենք ողտագործում «զագրի» շրջանը:
- 5) Ինչու ընկ. Լենինն ասել է, թե պետք


Ե զգաստ լինել և խնամել Կարմիր բանակի մարտունակությունը:

6) Ինչու ոպողովիցիալի գեղի ողջալիստական շինարարությունը հայտնաբերած թերահավատությունը վնասակար է՝ միջազգային հեղափոխության գործի համար:

### ՀԱՆՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1) Կազմել դիագրամմ այն հարկերի մասին,  
վոր վճարել և Համբուրգի բանվորը 1913 թ. և  
1924 թ.:

2) Ցերկրագնդի քարտեզի վրա գտնել Ա-  
մերիկայի Միացյալ Նահանգները, իտալիան,  
Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան:



ԳՐԱԴԱՐԱՆ



(024)

ԳԻՆԸ 20 ԿՈՎ.

